Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
_____Ն. Խ. Սարիբեկյան
«23» 12 2017 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Ավանդական բժշկության համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ Որակի ապահովման բաժինը /այսուհետ՝ Բաժին/ բուհում գործող ստորաբաժանում է, որը գործում է համալսարանի կանոնադրության, սույն կանոնադրության և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերի հիման վրա:

1.2 Բաժնի հիմնական առաքելությունը Համալսարանում եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթական որակի ապահովման մշակույթի ձևավորումն է, դրա շարունակական զարգացման ապահովման նպատակով անհրաժեշտ նախադրյալների ու նախապայմանների ստեղծումը:

1.3 Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է ռեկտորի հրամանով:

1.4 Բաժինն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման գործառույթներ, իր գործունեությունից բխող ուսումնասիրություններ, ինչպես նաև Բաժնի գործառույթների, խնդիրների ու նպատակների իրականացման նպատակով սույն կանոնադրությամբ նախատեսված լիազորությունների ու իրավասության շրջանակներում անհրաժեշտ այլ գործողություններ:

1.5 Բաժնի գործառույթները, խնդիրները, նպատակները, իրավասությունն ու լիազորությունները, պատասխանատվությունը, գործունեության և դադարման կարգը սահմանվում են սույն կանոնադրությամբ:

II. Բաժնի նպատակներն ու խնդիրները

2.1 Բաժնի հիմնական նպատակներն են՝

- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացների հետ համեմատելի ու համադրելի քաղաքականության ու մեխանիզմների մշակումն ու ներդրումը, գործընթացների իրականացումը:

- Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման գործընթացի իրականացմանն աջակցելը:
- Համալսարանի ծրագրային հավատարմագրման համար անհրաժեշտ հիմքերի ու նախադրյալների ստեղծմանն աջակցելը:

2.2 Բաժնի հիմնական խնդիրներն են՝

- Համալսարանում եվրոպական չափանիշներից և ուղենիշներից բխող բարձրագույն մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մեխանիզմների և գործիքների մշակումը, ներդնումը և շարունակական զարգացման ապահովումը:
- Կրթական ծրագրերի ու որակավորումների որակի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի ստեղծումն ու կիրարկումը:
- Կրթական ծրագրերի ու որակավորումների հաստատման, պարբերական վերանայման ու մշտադիտարկման մեխանիզմների ու գործիքների ստեղծումն ու կիրարկումը:
- Գնահատման չափանիշների, սկզբունքների ու կարգի բարելավումը:
- Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման մեխանիզմների բարելավումը:
- Ուսանողների աջակցության համակարգի գնահատման մեխանիզմների բարելավումը:
- Տեղեկատվության հասանելիության աստիճանի գնահատման համակարգի բարելավումը:
- Որակի ներքին ապահովման գործընթացներում հրապարակայնության ու թափանցիկության ապահովումը, դրա գնահատման մեխանիզմների բարելավումը:
- Որակի ներքին համակարգի պարբերական վերանայումը և բարելավումը:
- Նշված խնդիրների իրագործման համար հետազոտական և անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացումը:
- Շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմների և գործիքների կատարելագործումը:

III. Բաժնի գործառույթները

Բաժինն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

3.1 Ստեղծում է աշխատանքային խմբեր, պլանավորում ու համակարգում է վերջիններիս աշխատանքը, տրամադրում է մեթոդական և ընթացիկ աջակցություն:

3.2 Գնահատում է կրթական ծրագրերի արդյունավետությունը, վերլուծում է Համալսարանի գործունեությունը, հանդես է գալիս համապատասխան առաջարկություններով և զարգացման ծրագրերով:

3.3 Ռեկտորի հաստատմանն է ներկայացնում տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը:

3.4 Հաշվետվություններ է ներկայացնում ռեկտորատին և գիտական խորհրդին:

3.5 Համագործակցում է հայաստանյան և արտասահմանյան բուհերի որակի ապահովման կառույցների հետ, իրականացնում է փորձի փոխանակում:

3.6 Համագործակցում է համապատասխան պետական կառույցների հետ, մասնակցում է նրանց կողմից կազմակերպված որակի ապահովման վերապատրաստումներին ու սեմինար քննարկումներին:

3.7 Կազմակերպում է Բաժնի անդամների վերապատրաստում:

3.8 Ապահովում է որակի ապահովման գործընթացների հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

IV. Բաժնի ղեկավարումը

4.1 Բաժնի ղեկավարումն իրականացվում է Բաժնի վարիչի կողմից:

4.2 Բաժնի վարիչը նշանակվում է ռեկտորի կողմից:

4.3 Բաժնի վարիչը պատասխանատու է Բաժնի առջև դրված խնդիրների լուծման, որակի ապահովման գործառույթների և դրանց իրականացման համար:

4.4 Բաժնի վարիչը հաշվետու է ռեկտորատին և գիտական խորհրդին:

4.5 Բաժնի վարիչը պատասխանատու է Բաժնի նպատակների, խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

4.6 Ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Բաժնի աշխատանքային ծրագիրը և իրականացման ժամանակացույցը:

4.7 Առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին, գիտական խորհրդին և այլ ստորաբաժանումներին:

4.8 Իր իրավասության սահմաններում Համալսարանի ստորաբաժանումներից պահանջում և ստանում է որակի ապահովման անհրաժեշտ տեղեկատվություն:

4.9 Համագործակցում է պետական, տեղական և այլ մարմինների հետ: